«Եկե՛ք ինձ, բոլոր հոգնածներ ու բեռնավորվածներ»:

Մատթեոս 11:28

ԲԱՐԻ ԼՈՒՐ

Հունվար 2026, N1 (176)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀԱՎԱՏՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

ԲԱՐԻ ԼՈՒՐ

ԱՄՍԱԳԻՐ

Հունվար 2026թ., N1 (176)

Լույս է տեսնում 2009թ. մայիսից

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵ՛Ք

Հրահատ Ամիրբեկյան
Երկու բժշկություն 1

Արթնություն 5

Միլենա Գալոյան – Մաստյուկի վկայությունը 8

Երբ խիղճը մուշտակից թանկ է 14

Մանրապատումներ 15–16

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք աղոթել, որ թերթի միջոցով տարածվի Ավետարանի Բարի Լուրը, ու ցանվեն Ճշմարտության սերմերը, որպեսզի մարդիկ դառնան Աստծուն և Հավիտենական Կյանք ունենան:

Սիրելի՛ ընթերցողներ, խնդրում ենք ձեր դիտողությունները, առաջարկությունները ու նվիրատվությունները ուղարկել խմբագրություն: Մենք սիրով հաշվի կառնենք ձեր արձագանքները:
Էլ. հասցե՝ info@barilur.org

Երկու բժշկություն

Ղուկ. 8:40-56-ասվում է. *«Ու երբ Հիսուս վերադարձավ Կափառնայում, ժողովուրդը Նրան ընդունեց. վասն զի ամենքը Անոր կսպասեին: Եվ ահա Յայրոս անունով մարդ մը եկաւ, ու ինք ժողովարանին իշխանն էր. Յիսուսի ոտքը իյնալով՝ կ'աղաչէր անոր որ իր տունը մտնէ. Վասն զի մէկ հատիկ աղջիկ մը ունէր, գրեթէ տասուերկու տարեկան, որ մեռնելու մօտ էր. ու երբ անիկա կ'երթար, բազմութիւնը կը նեղէր զանիկա»:* Ժողովարանի իշխանի համար շատ դժվար էր, որ ինքը գնար Հիսուսի ետևից, որովհետև փարիսեցիները, և ժողովարանի իշխանները ուզում էին սպանել Հիսուսին: Բայց հիմա նրա 12 տարեկան աղջիկը հիվանդ էր, ու նա ուրիշ ճար չուներ. շատ էր սիրում իր աղջկան, իր հույսը կապել էր աղջկա հետ և ուզում էր, որ աղջիկը բժշկվեր:

Այդ ճանապարհին 12 տարի արյան տեռատեսությամբ տառապող մի կին էլ կար, որն իր ողջ ունեցվածքը ծախսել էր, բժիշկներին էր տվել, բայց ոչ մեկից բուժում չէր ստացել: Նա չնայեց ոչ մի արգելքի (Հիսուսի հետ մեծ բազմություն էր գնում...): Ոչ մի բան նրան չկանգնեցրեց, քանի որ նրա մտքում մի բան կար. «Եթե միայն Հիսուսի քղանցքին դիպչեմ, կբժշկվեմ»: Կնոջ համար հեշտ չէր այդ քայլը կատարելը. մի կողմից՝ հիվանդությունը, մյուս կողմից՝ անարգված լինելը... Ղևտ. 15-ում կարդում ենք, որ նման հիվանդություն ունեցողը անմաքուր էր համարվում, նրան դիպչողը՝ ևս, նրա նստած տեղը, պառկած տեղը անմաքուր էին... Նա մերժված էր հասարակության կողմից: Բայց այս կինը չնայեց այդ արգելքներին, եկավ Հիսուսի մոտ:

Սիրելինե՛ր, նա, ով ուզում է մոտենալ Հիսուսին, ինչպիսի արգելքներ էլ լինեն՝ անպայման Տեղ կհասնի, եթե միայն սրտում ցանկություն ունենա մոտենալու Հիսուսին: Հիսուսը

անպայման նրան կընդունի, նա կանցնի ճանապարհ, նա կհասնի Տեղ: Այդ կինը կպավ Հիսուսին, և իսկույն արյունը դադարեց: Հիսուսն ասաց. «Ո՞վ էր ան որ ինծի դպաւ»: Պետրոսը զարմացած էր Հիսուսի հարցից. *«Վարդապե՛տ, բազմութիւնը քեզ կը հրէ ու կը նեղէ, ու կըսես թէ Ո՞վ ինծի դպաւ: Եւ Յիսուս ըսաւ, Մէկը ինծի դպաւ, քանզի իմացայ որ ինծմէ զօրութիւն մը ելաւ: Երբ տեսաւ կինը որ բանը անկէ չպահուեցաւ, դողալով եկաւ ու անոր առջև ինկաւ, և բոլոր ժողովուրդին առջև անոր պատմեց թէ ի՞նչ բանի համար անոր դպեր էր, և թէ ի՞նչպէս ինք իսկոյն բժշկուեցաւ: Եւ Յիսուս ըսաւ անոր, Քաջալերուէ, աղջի՛կ, քու հաւատքդ քեզ բժշկեց, գնա խաղաղութեամբ»:*

Եղբայրնե՛ր, քույրե՛ր, շատերն էին դիպչել Հիսուսին, բայց մեկն էր, որ իսկապես կպել էր: Նա հավատքով կպավ Հիսուսին: Մյուսները ֆիզիկապես էին դիպչում, այս կինը՝ հավատքով: Եվ վերջացան նրա տառապանքները: Հետաքրքիր է՝ Հայրոսի աղջիկը 12 տարեկան էր, և այս կնոջ հիվանդությունն էլ էր 12 տարվա: Ժողովարանի իշխանը 12 տարի վայելել էր աղջկա սերը, վայելել էր ընտանիքի գուրգուրանքը, ապրել էր օրհնության մեջ, իսկ այս խեղճ կինը տառապել էր, կորցրել ողջ ունեցվածքը, անգամ անարգված էր: Շարունակության մեջ կարդում ենք. *«Երբ ինք դեռ կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ ու ըսաւ անոր, Աղջիկդ մեռաւ, ալ վարդապետը մի յոգնեցներ:* Բայց Յիսուս երբ լսեց, ասաց. *«Մի՛ վախնար, միայն հաւատա, ու պիտի ապրի»»:* Երբ տեղ հասան ու մտան Հայրոսի տուն, շատ մարդիկ էին հավաքված. եկել էին ցավակցելու, որովհետև աղջիկը իսկապես մահացել էր. *«Ամէնն ալ կուլային ու կ՝ողբային անոր վրայ. և ինք ըսաւ, Մի՛ լաք, անիկա մեռած չէ, հապա կը քնանայ: Եւ անոնք ծաղր կ՝ընէին զանիկա, քանզի գիտէին թէ մեռաւ»:* Անգամ ծիծաղում էին Հիսուսի վրա:

Սիրելինե՛ր, եթե մեկը սուգի մեջ է, բայց ծիծաղում է, իրականում նա չի սգում: Նրանք եկել էին՝ ինչպես վարձու լացողներ: Նրանց մեջ սուգ չկար, նրանք ծաղրում, ծիծաղում էին, թեև 12 տարեկան աղջիկը մեռած էր: Հիսուսը բոլորին դուրս

հանեց և Հակոբոսի, Հովհաննեսի ու Պետրոսի հետ մտավ աղջկա սենյակ և ասաց. «Աղջի՛կ, ելի՛ր»: Գործք 9:40-ում նույն խոսքն ասաց Պետրոսը, երբ գնացել էին արդեն մեռած Այծեմնիկի՝ Տաբիթայի տուն, որ շատ բարի գործեր էր կատարել մարդկանց համար, և մարդիկ սգում էին նրա մահը. *«Տաբիթա՛, ելի՛ր կայնէ. ան ալ իր աչքերը բացաւ, ու Պետրոսը տեսնելով՝ ելաւ շիտակ նստաւ»:*

Եղբայրնե՛ր, քույրե՛ր, այս խոսքը սովորական խոսք չէր: Այս խոսքը երկնքից իջած հրաման էր, և այդ հրամանը պիտի կատարվեր: Տեսե՛ք, սիրելինե՛ր, Օրենքը տեռատես կնոջն արգելում էր մոտենալ, դիպչել որևէ մեկին, բայց կինը չնայեց Օրենքին: Նա նայեց Հիսուսին, եկավ Հիսուսին և բժշկություն ստացավ: Եթե նա Օրենքի մեջ մնար՝ չէր բժշկվի, կմեռներ: Սիրելինե՛ր, գիտենք, որ Օրենքը կատարյալ չէ, Օրենքը չի կարող մարդուն երկինք տանել: Ինչպե՞ս հասկանանք, որ Օրենքը կատարյալ չէ: Օրինակ՝ հրեան արու զավակ է ունեցել, և ըստ Օրենքի՝ պետք է թլփատի ութերորդ օրը: Բայց եթե այդ օրը շաբաթ է, չի կարող թլփատել: Այսինքն՝ այդ օրը թլփատի՝ մեղք է, չթլփատի՝ էլի մեղք է: Ի՞նչ անի: Ուրեմն, Օրենքը կատարյալ չէ, կատարյալը միայն Քրիստոսն է: Հիսուսն Ինքն է Հարությունը և Կյանքը, Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը. *«Եւ անոր հոգին դարձաւ, ու իսկոյն ոտքի ելաւ. և Յիսուս հրաման ըրաւ որ ուտելիք տան անոր» (Ղուկ. 8:55):*

Հիշենք չորս օրվա մեռած Ղազարոսին, որին ևս հարություն տվեց Հիսուսը. *«Ըսաւ անոր (Մարթային) Յիսուս, Քեզի չըսի՞ որ եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը պիտի տեսնես» (Հովհ. 11: 40):* Փա՛ռք Տիրոջը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսը Շնորհքի Աստված է: Սիրո Աստված է: Եթե անգամ չբժշկի ու տանի Երկինք՝ ավելի լավ, եղբայրնե՛ր, քույրե՛ր: Ես այս խոսքերը ասել եմ ինձ համար, երբ առողջական խնդիրը ծանրացած էր: Ինձ նախատում էին խոսքերիս համար, բայց Հիսուսի մոտ շա՛տ լավ է, սիրելինե՛ր, Հիսուսի հետ շա՛տ լավ է: Փա՛ռք Իրեն: Ովքեր ունեն դժվարություններ, նեղություններ, թո՛ղ աղոթք անեն, որ Աստված առաջին հերթին ոչ թե նեղությունը վերցնի, այլ՝ որ այդ նեղության

մեջ զորություն տա՝ այն անցկացնելու և Տիրոջից սովորելու համար:

Սիրելի՛ս, երբ մեծ նեղություն է գալիս, դու ասա նրան. «Բարո՛վ եկար, սիրելի՛ նեղություն: Դու եկար, որ ինձ մոտեցնես Տիրոջը»: Նեղությունները քեզ և ինձ Տիրոջը մոտեցնելու համար են: Աղոթե՛ք ու ասացե՛ք Տիրոջը. «Մենք վստահում ենք Քեզ, Տե՛ր, մեզ հե՛տ եղիր, Տե՛ր, տա՛ր ուր կկամենաս, արա՛ մեզ այն, ինչ Դու ես ցանկանում: Տե՛ր, մի՛ թող, որ մեր կամքը մեր կյանքի մեջ արտահայտի հապա թող ամեն բանի մեջ քո կամքը լինի»: Ամե՛ն:

Հրահատ Ամիրբեկյան

Հետգրություն.

Սիրելի Եղբայրնե՛ր և քույրե՛ր, մենք պիտի մտնենք նեղ դռնով և գնանք մի նեղ ճանապարհ, որպեսզի Տեղ հասնենք: Այդ ճանապարհը հեշտ ճանապարհ չէ, դժվար ճանապարհ է: Այն լիքն է վտանգներով: Այդ ճանապարհը գնալու համար դու ընկածին պիտի բարձրացնես, սովածին պիտի հաց տաս, ծարավին՝ ջուր, քեզ հալածողի համար աղոթք անես, սիրես՝ բոլորին անգամ քո թշնամուն: Դու քո ամբողջ մարդկային ուժը, զորությունը պետք է մի կողմ դնես և Տիրոջը ապավինես: Այդ ճանապարհը միայն ու միայն Սուրբ Հոգու միջոցով կարող ես գնալ: Եվ եթե գնաս հասնես այն Տեղը, որտեղ պիտի մտնես, ասում եմ քեզ՝ այնտեղ կա «մաքսակետ»: Այդ «մաքսակետը» պետք է անցնես, որպեսզի երկրից Երկինք բարձրանաս: Այդ «մաքսակետի» ստուգումները շա՛տ խիստ են ու մանրակրկիտ: *«Եւ հոն բնաւ անմաքրութիւն մը պիտի չմտնէ, ոչ ալ պղծութիւն ու ստութիւն գործող մը, հապա միայն անոնք՝ որ Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած են» (Հայտ. 21:27):*

Ինչպե՞ս անցնել այդ «մաքսակետով». միմիայն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվական ու սուրբ Արյունով: Նրա Արյունը մաքրում է մեզ ամեն մեղքերից: Չկա մի մեղք, որ Հիսուսի Արյունը անզոր լինի մաքրելու: Ուրեմն, միայն Հիսուսի Արյանը վստահելով, միայն Նրան ապավինելով կարող ենք այդ «մաքսակետից» անցնել ու մտնել մի քաղաք, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է:

Արթնություն

սկիզբը՝ նախորդ համարում

Ուրեմն, արթնության **առաջին քայլը** մեղքերի խոստովանությունն է: Հիշենք, թե ինչ գին է վճարել Հիսուսը՝ մեզ մեղքերից մաքրելու համար: Խընդրենք, որ Սուրբ Հոգին հայտնի մեզ մեր ծածուկ մեղքերը: Ստորև բերված հարցերի ցուցակը կօգնի մեզ բացահայտել, թե ինչ էջեր կան մեր կյանքում, որոնք լիովին հանձնված չեն Հիսուսի տնօրինությանը.

-Կա՞ արդյոք մի բան, որ Աստծուց առավել եմ սիրում՝ ընտանիք, աշխատանք, հաճույքներ, իմ անձը (Մատթ. 6:33, Մարկ. 12:30):

-Կյանքիս որևէ պարագայի համար Աստծու դեմ դժգոհություն կամ տրտունջ հայտնե՞լ եմ երբևէ (Ա Կորնթ. 10:10, Փիլիպ. 2:14, Ա Թսղ. 5:18):

-Սիրո՞ւմ եմ արդյոք գովեստի խոսքեր լսել մարդկանցից, գովաբանվել կատարածս բարի գործերի համար: Սիրո՞ւմ եմ լինել ուշադրության կենտրոնում (Մատթ. 6:1-5, Հովհ. 12:43):

-Անհամբե՞ր եմ մյուսների նկատմամբ, քննադատու՞մ եմ մարդկանց: Վիրավորվո՞ւմ եմ քննադատվելիս: Որևէ մեկի նկատմամբ լցվա՞ծ եմ բարկությամբ: Կա՞ արդյոք իմ մեջ դառնության արմատ (Եբր. 12:15):

-Համառ և պնդաճակա՞տ եմ արդյոք, ունե՞մ վիճաբանելու և չենթարկվելու սովորություն: Իմ ասածները միշտ ճի՞շտ եմ համարում: Կոպի՞տ եմ մարդկանց հետ, հեգնանքո՞վ եմ վերաբերվում նրանց (Փլպ. 2:3, Եփ. 5:21):

-Վախենու՞մ եմ մարդկանց կարծիքներից, խոսու՞մ եմ արդյոք պարտականությունից: Թաքցնո՞ւմ եմ Աստծու շնորհած տաղանդները (Մատթ. 25: 24-28):

-Նախանձո՞ւմ եմ արդյոք որևէ մեկին, թաքուն ուրախանո՞ւմ եմ ինչ-որ մեկի անհաջողությունից, տխրո՞ւմ եմ արդյոք որևէ մեկի հաջողության համար (Ա Կորնթ. 13:4-6):

-Կա՞ արդյոք մի բան, որի

մեջ պակասել է անկեղծությունս: Թաքցնո՞ւմ եմ արդյոք ինչ-որ ճշմարտություն: Փորձո՞ւմ եմ ծածկել սխալներս: Փորձո՞ւմ եմ ավելի լավ տպավորություն թողնել, քան իրականում կամ: Չափազանցություններ անո՞ւմ եմ (Մատթ. 23: 27-28, Հակ.5:16):

-Հայտնվո՞ւմ եմ արդյոք հուսահատության կամ վհատության մեջ: Կորցրե՞լ եմ արդյոք Քրիստոսին չճանաչողների հանդեպ մտահոգությունս կամ սրտացավությունս: Հոգեպես տկարացե՞լ եմ, գաղջ վիճակի մե՞ջ եմ, դադարե՞լ եմ կարգապահ կյանքով ապրել (Մարկ. 8:34, Հայտն. 2:4-5, 3:15-16):

-Ենթարկվո՞ւմ եմ արդյոք աշխարհի կանոններին, սկսե՞լ եմ անհավատների նման մտածել: Աշխարհը և նրա հաճույքները սկսել են ինձ դո՞ւր գալ (Հռովմ.12:2, Ա Հովհ.2:15-17):

Եթե հիշյալ հարցերից որևէ մեկի պատասխանը դրական է, ուրեմն պետք է ընդունենք և Աստծու առջև խոստովանենք մեր մեղքը: Այդ անելով՝ թույլ կտանք, որ Աստված արթնություն սկսի մեր մեջ: Իսկ եթե ետ կանգնենք այդ քայլից, ավելի կտկարանանք և կհեռանանք Աստծուց:

Արթնության համար անհրաժեշտ **երկրորդ քայլն** ապաշխարությունն է բոլոր այն մեղքերից, որոնք հայտնել է մեզ Սուրբ Հոգին: Ապաշխարել՝ նըշանակում է խորապես զղջալ մեղքերի համար և ամբողջովին հրաժարվել դրանցից: Այդ ժամանակ Աստված կների ու կմաքրի մեզ (Ա Հովհ.1:9): Եթե չունենք այդ ներումն ու ազատագրությունը, ուրեմն դեռ լիովին չենք հրաժարվել մեր մեղքերից:

Երրորդ քայլը մեր կատարած սխալի գործնական շըտկումն է (Մատթ. 5:23-24, Ղուկ. 19:8)՝ ինչ-որ մեկից ներողություն խնդրել, ուրիշի ունեցվածքը վերադարձնել, վերականգնել նրա հեղինակությունը, ով վարկաբեկվել է մեր կողմից: Շատ կարևոր է նաև ներելը, քանի որ ինչ-որ մեկի դեմ դառնություն կամ բարկություն կուտակելը մեծ մեղք է (Մատթ. 6:12,14-15):

Արթնության **չորրորդ քայլը** մեր կյանքը Քրիստոսին վերադարձնելն է: Մեր կյանքի բոլոր քայլերը ամբողջությամբ պետք է հանձնենք Նրան, ոչինչ չպետք է պահենք: Կատարե-

լապես պետք է հանձնվենք Նրա կամքը կատարելուն (Հովհ. 14:15): Մենք մեր տերը չենք, մենք Նրա սեփականությունն ենք (Ա Կորնթ. 6:19-20):

Արթնության համար պահանջվող **հինգերորդ քայլը** խոնարհ ու զղջացող սրտով Աստծու խոստումներին սպասելն է: Մենք մեր սրտի դուռը պետք է բացենք՝ Սուրբ Հոգով լցվելու համար. Աստված պատվիրել է մեզ Հոգով լցվել (Եփ. 5:18): Ուստի պետք է փափագենք այդ լեցունությանը (Հռ. 12:11), խնդրենք՝ Հոգով լցվելու համար (Մատթ. 7:7-8,11, Ղուկ. 11:13):

Վերջին՝ **վեցերորդ քայլը,** Սուրբ Հոգուն հնազանդվելով ապրելն է: Ոչ ոք չի կարող Հոգով լցվել, եթե չհանձնվի Հոգու ղեկավարությանը: Պողոսը գրում է. *«Միայն թէ զայս կը զրուցեմ. Հոգիով գացէք, ու մարմնին ցանկութիւնը պիտի չկատարէք» (Գաղ. 5:16):* Սա հոգևոր հաղթանակի՝ Քրիստոսին նմանվող կյանքն ապրելու բանալին է: Հաղթական կյանքով ապրել՝ նշանակում է թույլ տալ, որ Քրիստոսն Իր Կյանքն ապրի մեր մեջ (Գաղ. 2:20): Սա է մեր նպատակը՝ նմանվել Քրիստոսին (Հռովմ. 8:29): Չկա առավել մեծ նպատակ:

Այսպիսով, վերոնշյալ քայլերն անհրաժեշտ են արթնության համար, բայց հիշենք, որ արթնության գործն ամբողջությամբ Սուրբ Հոգին է կատարում՝ Իր ժամանակին և Իր եղանակով: Ուստի մեր կարողության սահմաններում մեր անելիքը կատարելուց հետո Սուրբ Հոգու գործը ակնկալենք:

«Ու իմ անունովս կոչուած ժողովուրդս եթէ խոնարհին ու աղօթք ընեն, ու իմ երեսս խընդրեն եւ իրենց չար ճամբաներէն դառնան, ես ալ երկինքէն պիտի լսեմ ու անոնց մեղքը ներեմ ու անոնց երկիրը պիտի բժշկեմ» (Բ Մնաց. 7:14):

ՄԻԼԵՆԱ ԳԱԼՈՅԱՆ-ՄԱՏՍՅՈՒԿԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ես այսօր ուզում եմ վկայել այն մասին, թե Աստված ինչ հրաշք կատարեց իմ կյանքում: Վկայությունն սկսելուց առաջ ուզում եմ կարդալ Եբրայեցիների թղթից. *«Վասն զի Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ, և ամէն երկսայրի սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչև շունչը ու ոգին և յօդուածները ու ծուծը բաժնելու, և կը քննէ սրտին խորհուրդները ու մտածմունքները» (4:12):* Ես ցանկանում եմ վկայել Աստծու Խոսքի զորության մասին, թե որքան զորեղ և գործուն է այն, որքան կենդանի ու անփոփոխ մեր օրերում նույնպես, նույնիսկ այն դեպքում, որ մենք Աստծուն չենք ճանաչում: Ցանկանում եմ ասել, որ Աստվածաշունչ մատյանում գրված ամեն մի խոսքը կենդանի է, ունի ուժ ու զորություն՝ մարդկանց բժշկելու, հրաշքներ կատարելու, անելու այն, ինչ մարդու կողմից անհնար է:

Ի՞նչ է վկայությունը կամ վկա լինելը. վկան մարդ է, որը ներկա է գտնվում կամ մասնակիցն է լինում մի բանի, որը պետք է հաստատել և ապացուցել, թե ինչ և ինչպես է տեղի ունեցել, որովհետև նա այն փորձել է, տեսել իր աչքերով, լսել իր ականջներով, և կարող է վկայել այդ մասին: Եվ այսօր ես ուզում եմ վկայել Աստծու Խոսքի զորության մասին:

Իմ կյանքի այդ մասն

սկսվեց նրանից, որ երբ ես իմ սենյակում պառկած էի, դուրս եկա իմ մարմնից և անընդհատ մտածում էի այն մասին, թե ինչ եմ ես այստեղ անում, որ պետք է արագ հեռանամ, քանի դեռ չեմ վերադարձել նորից մարմնիս մեջ: Երբ հասա սենյակի դռանը, թեքվեցի, որպեսզի վերջին անգամ նայեմ մարմնիս: Այդ պահին լսեցի մի զորավոր ձայն, որն ինձ ասաց. «Վերադարձի՛ր»: Այդ ձայնից իմ ներսում ամեն բան սկսեց թրթռալ և այն այնքան զորավոր էր, որ ես չէի կարող նրան չենթարկվել: Այդ հրամանից բառացիորեն մի վայրկյան հետո ես արթնացա: Այնպիսի տպավորություն էր, կարծես լույսն անջատված էր, ու այն վառեցին: Այդ երեկո ես կոկորդումս ուժեղ ցավ ունեցա: Մինչ այդ ոչ մի ախտանշան չէր եղել: Հաջորդ մի քանի օրվա ընթացքում սկսեց բարձրանալ ջերմությունս, ցավել կոկորդս: Քանի որ ամառ էր, ես մտածեցի, որ հնարավոր է՝ ինչ-որ սառը հյութ եմ խմել, և մի ամբողջ շաբաթ չէի կարողանում ջերմությունս իջեցնել: Դիմեցի բժշկի և որոշեցին, որ ինձ պետք է հիվանդանոց պառկեցնեն, քանի որ ինչ-ինչ հետազոտություններ են անհրաժեշտ՝ պարզելու համար, թե ինչ պատճառով է ցավում կոկորդս: Ես մտածում էի, որ ուղղակի նշագեղձերս են բորբոքվել, հիմա ինչ-որ հակաբիոտիկներ կնշանակեն ու կուղարկեն տուն, բայց այդպիսի բան չեղավ, և երեք օր հետո բուժքույրն ասաց, որ ինձ պետք է տեղափոխեն այլ բաժանմունք: Ինձ ոչ մի բացատրություն չտրվեց, և ես մտածեցի, որ կհանդիպեմ բժշկին ու նրանից կհարցնեմ, թե ինչ է կատարվում: Երկու-երեք օր այդ նոր բաժնում էի, բայց ինձ ոչ ոք չմոտեցավ ու ոչ մի նշանակում չարեց: Մտածում էի, որ իմ վիճակն արդեն լավ է, դրա համար էլ գնացի բժշկի մոտ, որպեսզի ինձ դուրս գրեն: Բժիշկը դժգոհ դեմքով ինձ լսելուց հետո ասաց.

- Իսկ դուք ի՞նչ բուժում եք սպասում, ամեն բան այնքան բարձիթողի է, որ մենք ոչինչ անել չենք կարող: Եվ եթե ինչ-որ մեկը դուրս գրվելուց կգա ձեր ետևից, ես ցանկանում եմ նրա հետ խոսել:

- Լա՛վ,- համաձայնեցի ես,- եթե պետք է՝ ծնողներս կգան:

Հաջորդ օրը ծնողներս եկան, ինձ վերցրին, և երբ դուրս էի գրվում՝ նկատեցի, որ դա

ուռուցքաբանության բաժինն է: Ես ամբողջ կյանքում բժշկի չէի դիմել և, բնականաբար, սկսեցի փարատել մտքերի այն տարափը, թե ինչու եմ ես պառկած ուռուցքաբանության բաժնում: Երբ մարդու հետ ինչ-որ լուրջ բան է պատահում, նա չի կարողանում անմիջապես ընդունել դա. «...դա ինձ հետ չի կարող պատահել, կարող է այն կատարվել ուրիշների հետ, բայց ոչ ինձ հետ, միգուցե ես այնպես չհասկացա,գուցե ինչ-որ բան այնպես չի ստացվել...»: Հետագայում պարզվեց, որ ինձ մոտ հայտնաբերվել է ավշային հանգույցների քաղցկեղ, այն էլ զարգացման վերջին՝ չորրորդ փուլում: Հիվանդությունն այնքան խորացած էր ու բարդ, որ նույնիսկ չցանկացան հիվանդանոցում պահել. «Թող իր կյանքի վերջին մեկ-երկու ամիսն անցկացնի հարազատների միջավայրում»,- ասել էին հայրիկիս: Ծնողներս այդ պահին ինձ չասացին այդ մասին, և չնայած նրան, որ իմ աչքերով տեսա, թե ինչպես ինձ դուրս գրեցին ուռուցքաբանության բաժանմունքից, ես այդ փաստը ո՛չ ընդունեցի, ո՛չ էլ հաշտվեցի մտքերի հախուռն տարափի հետ:

Մի քանի օրից ծնողներս առաջարկեցին հետազոտվել մեկ այլ քաղաքում: Երբ ես նրանց հարցրի, թե ինչո՞ւ ենք գնում այլ քաղաք, ինձ պատասխանեցին, որ այստեղ ոչինչ չեն հասկացել, դրա համար էլ դիմում ենք ուրիշ բժշկի: Ես հանգիստ ընդունեցի դա, քանի որ երբեք չէի հիվանդացել, ու դա կարծես ինձ չէր վերաբերում:

Այդ քաղաքի հիվանդանոցում էլ անալիզներ հանձնեցի, բժիշկն ասաց, որ մի երկու ժամից մոտենանք: Հայրս ամեն բան այնպես կազմակերպեց, որ ես ինչ-որ տեղ նրան սպասեմ, իսկ ինքը գնա բժիշկի մոտ ու արագ ետ գա: Երբ նա ետ վերադարձավ՝ ասաց. «Դե՛, վերջ, գնացինք տուն»: Երբ ես նրան հարցրի, թե ինչո՞ւ չենք գնում բժշկի մոտ, նա պատասխանեց, որ ինքը հենց նոր եղել էր նրա մոտ ու այնտեղից է գալիս:

- Եվ... ի՞նչ ասացին...

- Ոչ մի նոր բան, ինչ որ նախկինում էին ասել, նույնն էլ հիմա: Ոչ մի լուրջ բան չկա, նպատակահարմար չեն գտնում քեզ հիվանդանոց պառկեցնել:

Մենք տուն վերադարձանք: Որոշ ժամանակ ես ինձ այնքան էլ վատ չէի զգում, բայց մի երկու շաբաթից վիզս այտուցվեց, և այտուցը կամաց-կամաց բարձրանում էր դեպի քունքս:

Մի քանի օրից գնացինք մեկ այլ քաղաք՝ բժշկի... նորից անալիզներ... Երբ հայրս թղթերը ձեռքին վերադարձավ, ասաց, որ ինձ ցավազրկող դեղեր են նշանակել: Ես բարկացա. «Ի՞նչ է նշանակում ցավազրկող... ես ցավեր ունեմ, ի՞նչ պիտի անեն ցավազրկողները»: Եվ, բարկացած, ինքս մտա բժշկի մոտ. «Լսե՛ք, ես ցավեր ունեմ, այնքան ուժեղ են ցավերս, որ ուտել անգամ չեմ կարողանում, ինձ անհանգստացնում է վզիս ուռուցքը, ես ցանկանում եմ, որ ինձ կա՛մ վիրահատեն, կա՛մ դեղեր նշանակեն դրա դեմ»: Բժիշկն ինձ ասաց. «Դուք հիվանդանոցում անելիք չունեք, լավ կլինի այս մի երկու ամիսն անցկացնեք ձեր ընտանիքի հետ»: Այս բառերից հետո ինձ մնում էր ընդունել և հաշտվել վիճակիս հետ: Ասել, որ իմ ներաշխարհը փուլ եկավ՝ ճիշտ չի լինի, քանի որ արդեն ամսից ավել էր, ինչ իմ ներսն ուղղակի դատարկ էր: Վերադարձանք տուն...

Ցավերս ուժեղանում էին ոչ թե օրեցօր, այլ ժամ առ ժամ:Դա այնպիսի ցավ էր, որ միայն այդ վիճակով անցած մարդը կարող է ինձ հասկանալ, որովհետև ես չեմ կարող գտնել այնպիսի բառեր, որոնք կնկարագրեն այդ ցավը: Դա այնպիսի ցավ էր, որ ոչ միայն քեզ քայքայում էր, այլև լափում ամբողջովին, որովհետև չնայած այն բանին, որ ցավի աղբյուրը կոկորդումս էր, ցավում էին մարմնիս բոլոր բջիջները՝ գլուխս, քունքերս ծնոտս, ատամներս: Այնպիսի տպավորություն էր, որ ծնոտիս ոսկորները ինչ-որ ծանր բանով փշրում են: Դա տևեց չորս-հինգ շաբաթ: Ես արդեն այդ ցավերից չէի կարողանում քնել, անկողնուց չէի կարողանում վեր կենալ, որովհետև միշտ ջերմությունս մոտ 40 աստիճան էր: Ես ոչ միայն չէի կարողանում ուտել, վախենում էի նույնիսկ մի կում ջուր խմել, որովհետև այդ մի կում ջուրն ինձ ավելի մեծ ցավ էր պատճառում: Ինձ ցավ էր պատճառում նույնիսկ ամեն մի շունչը՝զգում էի, թե ինչպես է օդն անցնում կոկորդովս, շնչառական ուղիներովս, և նույնը արտաշնչելիս:

Եկավ մի պահ, որ ես փակեցի աչքերս ու դիմեցի Տիրոջը. «Տե՛ր, ի՞նչ անեմ, որ մտքերս այս ցավերից մի քիչ ցրվեն»: Այդ ժամանակ ներս մտավ մայրս և առաջարկեց հեռուստացույց միացնել, որպեսզի մտքերս շեղվեն: Ես խնդրեցի նրան Նոր Կտակարանը տալ: Ավետարան կարդալու միտքն ինձ մոտ անսպասելի առաջացավ: Ես ազգությամբ եզդի եմ, և մեր դավանանքն այլ է: Մեզ մոտ ընդունված չէ, որ մեկը փոխի իր դավանանքը: Եզդիներն ամեն միջոցի դիմում են, որ հանկարծ այդպիսի բան չկատարվի՝ կարող են հարազատներդ քեզանից երես դարձնել, մինչև իսկ սպանել: Մայրս գիտեր, որ դա քրիստոնեական գրականություն է, որն ինձ փողոցում մի անծանոթ մարդ էր նվիրել, բայց տվեց:

Ես Կտակարանը ոչ թե կարդում էի, այլ կարծես կուլ էի տալիս, քանի որ այն ինձ հանգստացնում էր: Այդ գիրքը ես կարդացի երկու օր ու գիշեր անընդմեջ: Եվ հանկարծ զգացի, որ այլևս ցավ չեմ զգում: Դա ինձ վախեցրեց, որովհետև մինչ այդ ես զգում էի մարմնիս բոլոր մասնիկները, իսկ հիմա՝ ոչ մի ցավ: Շարունակեցի այն կարդալ անընդմեջ՝ երրորդ, չորրորդ օրը նույնպես: Զգացի, որ քնել եմ ուզում, և վերջապես քնեցի: Արթնացա միայն այն ժամանակ, երբ զգացի, որ կողքիս մարդ կա կանգնած, և ինչ-որ մեկը կպավ կոկորդիս: Այդ անձնավորությունը սպիտակ հանդերձներով էր, բայց դա սովորական սպիտակ չէր, ավելի պայծառ էր ու խիտ: Երբ սկսեցի ուշքի գալ, այլևս ոչ մեկին չտեսա: Դա առավոտյան ժամը հինգը-վեցը կլիներ: Երբ ավելի ուշ մայրս մտավ սենյակ, ես նրան ասացի.

- Մա՛մ, ինձ թվում է, որ Տերն ինձ բուժել է:

- Ինչպե՞ս, պատմի՛ր ինձ, ի՞նչ է կատարվել:

- Ես այս գիրքը կարդում եմ արդեն մի քանի օր և գիտեմ, որ կա մի Աստված, ով Արարիչն է ամեն բանի: Չնայած մենք ազգությամբ եզդի ենք, բայց սրտիս խորքում միշտ էլ հավատացել եմ, որ կա մի Աստված, Ով արարել է ամեն բան և Նա մեր Հայրն է: Այս գիրքը կարդալուց հետո աստիճանաբար թողեցին ինձ բոլոր ցավերը, և գիշերն արթնացա այն զգացու-

մից, որ մեկը կպավ կոկորդիս: Ես մտածում եմ, որ Աստված ինձ բժշկել է:

Մի քանի օր ոչինչ չէի կերել, բայց այդ ժամանակ քաղց զգացի ու մայրիկիցս ուտելու բան խնդրեցի: Նա ուտելիք բերեց... ես ուտում էի ու ցավ չէի զգում կոկորդումս: Մայրս սարսափած նայում էր ինձ, քանի որ լսել էր, որ հիվանդները մեռնելուց առաջ իրենց լավ են զգում:

Ես չդադարեցի Աստծու խոսքը կարդալուց և օր-օրի ավելի կազդուրվում էի: Ես երբեք քրիստոնեական եկեղեցում չէի եղել, Հիսուսին ո՛չ հավատում էի, ո՛չ էլ ընդունում էի որպես Աստված, ինձ ոչ ոք չէր ասել, որ Հիսուս Քրիստոսը երեկ, այսօր և հավիտյան նույնն է, որ Նա կարող է ինձ բժշկել, ինչպես արել էր 2000 տարի առաջ, բայց Նա անձամբ եկավ ինձ մոտ և հայտնվեց ինչպես բժիշկ և ինձ բժշկեց՝ չնայած այն բանին, որ ես ո՛չ աղոթել էի դրա համար, ո՛չ խնդրել էի, ուղղակի սկսել էի կարդալ Աստվածաշունչ, և Նրա կենդանի խոսքը ինձ բժշկեց:

Անօրենն ինձ համար իր ծրագիրն էր պատրաստել, բայց Հիսուսը, Ում ես դեռ չէի ճանաչում, Իր Խոսքով հայտնվեց իմ կյանքում և քանդեց չարի կապանքներն ու ազատեց ինձ: Եսայի մարգարեության 65-րդ գլխի 1-ին խոսքում գրված է. *«Ձիս չհարցնողներէն փնտռուեցայ, Ձիս չխնդրողներէն գտնուեցայ. Իմ անունս չկանչող ազգին Ահա ես, ահա ես՝ ըսի»:*

Երբ ես տասը-տասներկու տարեկան էի, մեր հարևանությամբ ապրում էին ծեր անզավակ ամուսիններ: Նրանք ինձ շատ էին սիրում և հաճախ էին իրենց տուն հրավիրում, նըստեցնում էին իրենց կողքին և ինձ համար Աստվածաշունչ էին կարդում: Մի անգամ այդ ծեր կինը փոքրիկ թղթի վրա գրեց «Հայր մեր. . .» աղոթքը և ինձ տալով՝ ասաց.

-Միլենա՛, ամեն գիշեր քնելուց առաջ կարդա՛ այս աղոթքը:

Ես որոշ ժամանակ կարդացի, բայց հետո մոռացա: Իսկ հիմա հասկանում եմ, որ այդ մարդիկ ինձ համար աղոթել էին, և նրանց աղոթքը պարապ չէր անցել, նրանք իմ մեջ ցանել էին այդ սերմերը, և երբ պահն եկավ՝ սերմերը պտուղ տվեցին:

ԵՐԲ ԽԻՂՃԸ ՄՈՒՇՏԱԿԻՑ ԹԱՆԿ Է

Մի եկեղեցում երեցը ծեր պապիկ էր, որն ունեցել էր տասներկու զավակ: Երբ զավակները հավաքվում են նրա ութսուն ամյակը շնորհավորելու, ավագ եղբորը հանձնարարում են խոսք ասել և ընդհանուր նվերը հանձնել հայրիկին:

Ավագ որդին ձեռքի նվերը դընում է անկյունում և դիմում հորը.

-Մեր սիրելի՛ հայրիկ, մենք այսօր հավաքվել ենք միասին քեզ շնորհավորելու և Տիրոջը փառավորելու այն բանի համար, որ դու մեր հայրն ես: Դու ամբողջ կյանքում ապրել ես փոքր, խղճուկ տան մեջ և թանկ իրեր երբեք չես ունեցել, որովհետև եկամուտդ փոքր էր, իսկ դու տասներկու երեխայի էիր մեծացնում, հյուրեր էիր ընդունում և օտարականների հյուրընկալում, բոլորին կերակրում էիր, իսկ հիմա մենք մեծացել ենք, լավ վաստակում ենք և շատ ավելի լավ կյանքով ենք ապրում, քան դու: Դրա համար էլ քո ութսունամյակին որոշել ենք մի թանկ բան նվիրել:

Նա տոպրակից հանում է իսկապես շատ թանկ նվեր՝ բնական մորթուց տաք մուշտակ: Իհարկե, երեցն իր կյանքում այդպիսի մուշտակ չէր ունեցել՝ կա՛մ հնամաշ վերարկու էր հագել, կա՛մ խունացած բամբակյա վերնազգեստ: Ծերունին շատ է հուզվում և արցունքն աչքերին ասում է.

-Թանկագիննե՛րս, դուք ի՞նչ բարի զավակներ եք, ես ընդունում եմ ձեր նվերը և սիրով այն կհագնեմ:

Ծեր երեցն արդեն սկսում է հավաքույթների գնալ թանկագին մուշտակով: Մի օր հավաքույթից դուրս է գալիս ցուրտ փողոց՝ մոտ քսանքսահինգ աստիճան սառնամանիք, բայց իր տաք մուշտակի մեջ չի մրսում: Մի որոշ տեղ գնալուց հետո, նրան են մոտենում երկու ավազակ և բռնելով մուշտակի օձիքից՝ ասում.

-Պապի՛, մուշտակդ հանի՛ր:

Մի վայրկյան մտածելուց հետո ծերունին ասում է.

-Տղանե՛ր, ես իհարկե մուշտակը ձեզ կտամ, բայց այս ցրտին ես դեռ կես ժամ էլ պիտի գնամ, մինչև տուն հասնեմ կմրսեմ ու կհիվանդանամ, և կարող է մեռնեմ: Դրա համար էլ ես ձեզ խնդրում եմ, գնանք ինձ հետ մինչև մեր տուն, հենց հասնենք բակի դռանը, ես մուշտակը կտամ ձեզ:

Տղաները համաձայնվում են:

Գնում են՝ պապիկը մեջտեղում, աջից ու ձախից՝ երիտասարդ ավազակները: Եվ երեցը նրանց պատմում է Տիրոջից, իսկ նրանք ծիծաղում են ծերունու վրա ու ծաղրում:

Ճանապարհի կեսն անցնում են, մեկ էլ մի մեքենա է կանգնում նրանց կողքին, պատուհանը բացում են, իսկ ներսում չորս երիտասարդներ են նստած.

-Նիկոլայ Սեմյոնիչ, նստե՛ք մենք ձեզ տուն կտանենք:

Այդ երկու ավազակը մի քիչ ետ են քաշվում և սպասում են, թե ինչ պետք է ասի ծերունին: Իսկ նա ասում է.

-Եղբայրներ, ես ինչքան ուրախ եմ, որ դուք այդքան ուշադիր եք, շնորհակալ եմ, բայց տուն տանել պետք չէ, քանի որ տղաների հետ Տիրոջից ենք խոսում:

-Դե այդ դեպքում բարի գիշեր,- և մեքենան հեռանում է:

Երիտասարդները շփոթվում են

-Իսկ ովքե՞ր էին նրանք:

-Մեր եկեղեցուց էին:

-Իսկ ինչո՞ւ նրանց հետ չգնացիք:

-Ինչպե՞ս կարող էի գնալ, չէ՞ որ ես ձեզ խոստացել էի մուշտակը տալ: Ես այլ կերպ չեմ կարող, Աստվածաշնչում գրված է, որ եթե խոստացել ես, անմիջապես կատարիր, իսկ ինձ համար խիղճը մուշտակից թանկ է:

Հասնում են տանը, ծերուկը հանում է մուշտակը, իսկ նրանք չեն ցանկանում այլևս մուշտակը վերցնել, այլ հարցնում են. «Դուք ո՞ր եկեղեցի եք գնում»: Երեցը հասցեն ասում է, և դրանից հետո ավազակներից մեկն սկսում է եկեղեցի հաճախել:

Պ.Ն. Սիտկովսկի

Մի իմաստուն մարդու հարցրին, թե ինչպես է, որ նա միշտ լավ տրամադրություն ունի: Նա պատասխանեց.

- Ես անհարմար եմ զգում տխրել Աստծու առաջ՝ հասկանալով, որ իմ բոլոր գործերը Նրա ձեռքերում են:

Մի փոքր քաղաքում գործարար մեկը գնում է անմիջապես քաղաքի եկեղեցու դիմաց գտնվող մի տարածք և այնտեղ գինետուն է բացում:

Եկեղեցու անդամներն անհանգստանում են՝ մտածելով, որ ամբողջ օրն այնտեղ պիտի խմեն, հարբեն ու ծեծկռտուք սարքեն: Եվ որպեսզի այդ հարցը Աստված Ինքը լուծի, գիշեր-ցերեկ աղո-

թում են՝ խնդրելով Աստծուց հարցին լուծում տալ:

Մի օր, ուժեղ փոթորիկի ժամանակ, կայծակն այնպես է հարվածում այդ գինետանը, որ այն հրդեհվում է և մոխիր դառնում:

Գործարարը դատի է տալիս եկեղեցու անդամներին՝ պատճառաբանելով, որ նրանց աղոթքներների հետևանքով է իր տարածքն այրվել: Իսկ եկեղեցու անդամներն ասում են, որ նրանք կապ չունեն այդ հրդեհի հետ: Դատավորը, լսելով երկու կողմին էլ, ասում է.

- Ես չգիտեմ ինչ ասել, ես երբեք այսպիսի խնդրի առաջ կանգնած չեմ եղել: Մի կողմում գինետան անհավատ տերն է, որը հավատում է, որ Աստված պատասխանում է աղոթքներին, իսկ մյուս կողմում՝ հավատացյալների եկեղեցին, որը չի հավատում, որ Աստված պատասխանում է իր աղոթքներին:

Մի անգամ գնացքով տեղ էի գնում: Ինձ հետ միասին ճամփորդում էին հիվանդի արտաքինով երկու կին՝ մայր ու աղջիկ: Ես նրանց ասացի.

- Հենց հիմա իմ պայուսակում մի բան կա, որը բուժում է աշխարհի ցանկացած հիվանդություն, և այն միշտ գործում է:

Նրանք հետաքրքրվեցին, և ես սկսեցի պատմել այդ միջոցի մասին ավելի ու ավելի: Վերջապես նրանք քաջություն հավաքեցին և ինձանից խնդրեցին այդ միջոցից մի չափաբաժին:

Ես բացեցի պայուսակս և այնտեղից հանեցի Աստվածաշունչս ու կարդացի Ելից գրքի 15-րդ գլխի 26-րդ խոսքը, որտեղ գրված է. *«Եւ ըսաւ, Եթէ Տէրոջը քու Աստուծոյդ ձայնին ուշադրութեամբ մտիկ ընես, ու ինչ որ անոր առջև շիտակ է՝ ընես, և անոր պատուիրանքներուն ականջ դնես, ու անոր բոլոր կանոնները պահես, այն ախտերէն մէ՛կը քու վրադ պիտի չբերեմ, զորոնք Եգիպտացւոց վրայ բերի. քանզի ես եմ Տէրը՝ որ քեզ կը բժշկեմ»:* Աստծու խոսքը երբեք ամոթով չի թողնում, Աստված ձեզ միշտ կբժշկի, եթե դուք հավատաք Նրա խոսքին:

Մինչ ես շարունակում էի պատմել այդ հրաշալի Բժշկի մասին, նրանց երկուսի հավատքն էլ ուղղվել էր դեպի Տերը, և հենց գնացքում Նա այդ երկու կնոջն էլ բժշկեց:

Սկոթ Վիգգլսվորթ

ՍԻՐԵԼԻ՛ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

Աստված սիրում է ձեզ և ուզում է, որ դուք հավատաք Իրեն ու փրկություն ունենաք: Այդ մասին կարդում ենք **Հովհաննու 3:16**-ում. *«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց, որ ով Նրան հավատա՝ չկորչի այլ հավիտենական Կյանք ունենա»:* Եթե դուք ուզում եք ավելին լսել ու իմանալ Աստծո և Նրա Խոսքի մասին, կարող եք դիմել հետևյալ հեռախոսահամարներով.

ԵՐԵՎԱՆ

Ավան	093 81-31-53	Մալխասյան Օնիկ
Զեյթուն	055 66-82-06, 099 66-82-06	Այդինյան Լևոն
Էրեբունի	093 53-43-68	Բարսեղյան Մնացական
Կենտրոն	094 84-35-04	Պետրոսյան Հայկ
Կոմիտաս	093 26-20-72	Ալավերդյան Սարգիս
ՀԱԹ (Բանգլադեշ)	055 72-28-12	Հովհաննիսյան Գևորգ
ՀԱԹ (Բանգլադեշ)	093 38-12-42	Ղազարյան Արտուշ
Նորքի զանգված	099 87-38-88, 077 87-38-80	Ղազարյան Ահարոն
Նորքի զանգված	091 16-49-45	Անտոնյան Արթուր
Շենգավիթ, Ջարբախ	077 55-57-55	Ամիրջանյան Արմեն
Աջափնյակ	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ
Քանաքեռ	093 53-25-26	Ամիրբեկյան Հրահատ
3-րդ մաս	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ

ՇՐՋԱՆՆԵՐ

Աբովյան	094 91-43-24	Քեշիշյան Ջանիկ
Ալավերդի	094 30-80-40	Դավոյան Վալերի
Աշտարակ	098 01-72-60	Մկրտչյան Անդրանիկ
Ապարան	093 77-06-70, 071 77-06-70	Գասպարյան Միշա
Արարատ	094 20-60-36	Ներսիսյան Նորիկ
Արթիկ	077 70-28-38	Փիլոյան Պողոս
Արմավիր	091 75-99-20	Մխիթարյան Ռադիկ
Արմավիր	093 19-52-04	Մարկոսյան Վրեժ
Արտաշատ	093 72-48-88	Համբարձումյան Վաչագան
Արտաշատ (գյուղերը)	093 83-71-31	Վարդանյան Անդրանիկ
Արտաշատ (Ազատավան)	077 28-75-91	Սամվելյան Պերճ
Արցախ	094 00-94-08	Մարդյան Սիեր
Գավառ	093 68-84-92	Մանուկյան Վարուժան
Դիլիջան	093 18-77-33	Սահակյան Սասուն
Եղեգնաձոր	077 40-26-24	Մարտիրոսյան Արզուման
Զորավան, Եղվարդ	098 85-05-02, 091 24-53-60	Մկրտչյան Մասիս
Զանգեզուր	094 00-94-08	Մարդյան Սիեր
Էջմիածին	093 18-75-30	Սուկաչ Էդիկ
Իջևան	093 18-77-33	Սահակյան Սասուն
Հրազդան	094 22-33-15	Օհանյան Աշոտ
Ճամբարակ (Կարմիր)	093 18-77-33	Սահակյան Սասուն
Մասիս	091 71-62-64, 093 71-62-64	Հարությունյան Մելսիկ
Մարտունի	093 86-30-13	Արշակյան Մելիք
Նոյեմբերյան	094 92-01-90	Նավասարդյան Ռուբեն
Շիրակի մարզ	099 30-79-69	Դարմանյան Գրիշա
Չարենցավան	093 28-64-13	Հայրապետյան Գևորգ
Սպիտակ	094 92-00-03	Խաչատրյան Արտակ
Սևան	093 48-76-43	Նաղարյան Արթուր
Վանաձոր	094 92-00-03	Խաչատրյան Արտակ
Վանաձոր	099 88-05-50	Նազարյան Ավետիք
Վարդենիս	094 91-44-80	Նշանյան Տոլիկ
Վեդի	094 03-26-16	Աղաբեկյան Գառնիկ (Ռուբիկ)
Տաշիր	093 09-84-33	Սուքիասյան Նորիկ
Տավուշ	093 43-72-33	Օհանյան Արթուր

www.barilur.org
info@barilur.org